

**1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ**

**1.4.1. Ձրադվածություն**

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2000թ. հունվար-փետրվարին հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1471.4 հազ. մարդ, որոնց 88.0 տոկոսը կամ 1295.0 հազ. մարդ զբաղված է տնտեսության մեջ, իսկ 12.0 տոկոսը կամ 176.4 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) կայուն կերպով չի ունեցել աշխատանք, գրանցվել է ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

Տնտեսության մեջ զբաղված բնակչության 37.8 տոկոսի կամ 489.9 հազարի վերաբերյալ տեղեկությունը ստացվում է մոտ 9 հազար տնտեսավարող սուբյեկտներից ամսական պարբերականությամբ ստացվող վիճակագրական հաշվետվությունների հիման վրա: 2000թ. փետրվարին նշված տնտեսավարող սուբյեկտներում զբաղված բնակչության թվաքանակը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 5.4 տոկոսով: Տնտեսավարող այս սուբյեկտներում զբաղված բնակչության 43.2 տոկոսը զբաղված է սոցիալական ոլորտում (առողջապահություն և սոցապ, կրթություն, մշակույթ, արվեստ) 28.2 տոկոսը՝ արդյունաբերության մեջ, 6.9 տոկոսը՝ տրանսպորտի և կապի համակարգում, 4.4 տոկոսը՝ շինարարության մեջ, 3.4 տոկոսը՝ բնակարանային կոմունալ և բնակչության կենցաղսպասարկման ոլորտում, 5.7 տոկոսը կառավարման համակարգում, և 8.2 տոկոսը՝ այլ ճյուղերում:

2000թ. փետրվարի վերջին ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունում հաշվառման են կանգնել 207.3 հազար աշխատանք փնտրող քաղաքացիներ, որոնց 99.1 տոկոսը կամ 205.5 հազարը չզբաղված քաղաքացիներն են: Գործազուրկի կարգավիճակ է ստացել չզբաղված քաղաքացիների 87.2 տոկոսը կամ 179.2 հազ. մարդ:

2000թ. փետրվարին վերը նշված ծառայության կողմից հաշվառման են վերցվել 7.7 հազ. մարդ, որոնցից 6.3 հազարը կամ 81.8 տոկոսը ստացել է գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել է 3.5 հազ. մարդ, որոնցից՝ 22.9 տոկոսը՝ աշխատանքի տեղավորման պատճառով:

**Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի, 2000թ. փետրվարին\***

	Աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը		նրանցից գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	տոկոսներով՝ նախորդ տարվա նկատմամբ	ընդամենը հազ. մարդ	տոկոսներով՝ նախորդ տարվա նկատմամբ
<b>Ընդամենը</b>	<b>207.3</b>	<b>122.1</b>	<b>179.2</b>	<b>119.8</b>
<i>այդ թվում՝</i>				
Արագածոտն	3.1	110.7	2.2	110.0
Արարատ	10.0	104.2	7.7	104.1
Արմավիր	15.7	135.3	12.6	131.3
Գեղարքունիք	12.7	128.3	9.2	122.7
Լոռի	29.2	118.7	26.4	115.8
Կոտայք	19.1	124.8	15.1	119.8
Շիրակ	35.7	113.7	32.2	109.9
Սյունիք	15.8	112.9	14.0	114.8
Վայոց Ձոր	2.5	100.0	2.1	105.0
Տավուշ	6.4	116.4	5.6	109.8
Երևան	57.1	134.0	52.1	133.2

\* ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայության տվյալներով:  
«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000թ. հունվար-փետրվարին»

Գործազուրկ բնակչության 95.0 տոկոսը կենտրոնացված է քաղաքային բնակավայրերում, նրանցից՝ 29.1 տոկոսը՝ Երևան, 16.3 տոկոսը՝ Գյումրի և 8.9 տոկոսը՝ Վանաձոր քաղաքներում:

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 63.8 տոկոսը: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում նախորդ տարվա փետրվարի նկատմամբ նվազել է 3.6 տոկոսային կետով:

Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2000թ. փետրվարին կազմել է 737 մարդ. այդ թվում՝ 73.3 տոկոսը կամ 540-ը՝ բանվորական մասնագիտությունների գծով:

2000թ. փետրվարին աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունների միջնորդությամբ աշխատանքի է տեղավորվել 801 մարդ: Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը մեկ տեղի հաշվով կազմել է 281 մարդ (աշխատանք փնտրող):

Նպաստառու գործազուրկների թվաքանակը 2000թ. փետրվարին կազմել է 26.7 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3053 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկած որպես զբաղվածության ծառայություններում գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2000թ. փետրվարին կազմել է 12.0 տոկոս և նախորդ ամսվա համեմատությամբ աճել է 0.1, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 2.0 տոկոսային կետով: